Լողորդ Վահեն

Ժամանակի սահմանափակում՝ 0.5 վայրկյան
Հիշողության սահմանափակում՝ 256 MB
Կշիռը՝ 100 միավոր

Շարադրանք

Վահեն սիրում է մրցույթից առաջ զբաղվել լողով: Նա գտնում է, որ օլիմպիադաներին պատրաստվելուն զուգահեռ պետք է նաև ֆիզիկական ծանրաբեռնվածություն: Լողը օգնում է նրան լուրջ հաջողություններ գրանցել սպորտային ծրագրավորման ասպարեզում: Հերթական անգամ լողավազանում նա այնքան տարվեց լողով, որ քիչ էր մնում մոռանար մրցույթի մասին: Ընկերները նրան կանչեցին և Վահեն շուրջը նայելով գտավ լողավազանից դուրս գալու ամենակարճ ուղին: Լողավազանը ուղղանկյունաձև տեսք ունի: Կարող ենք համարել, որ ուղղանկյան ներքևի ձախ անկյունը գտնվում է կոորդինատային հարթության `(0,0)` կետում, իսկ աջ վերևի անկյունը՝ `(a, b)` կետում: Վահեն գտնվում է լողավազանի ներսում՝ `(x, y)` կետում: Հարկավոր է հաշվել, թե լողավազանի եզրերից որևէ մեկին հասնելու համար առնվազն որքան է պետք իրեն լողալ:

Մուտքային տվյալներ

Առաջին տողում տրված են երկու դրական ամբողջ `a` և `b` `(0 < a, b ≤ 1000)` թվեր: Երկրորդ տողում տրված են Վահեի `x, y (0 < x < a, 0 < y < b)` կոորդինատները, որոնք նույնպես ամբողջ թվեր են:

Ելքային տվյալներ

Արտածել մեկ ամբողջ թիվ՝ Վահեի գտնվելու տեղից մինչև լողավազանի եզրագիծը մինիմալ հեռավորությունը:

Օրինակ

Մուտք	**ԵԼՔ**
`10 12` `1 2`	`1`
`10 12` `7 8`	`3`